Նույն օրը Վեհափառ Հայրապետն ընդունեց Թուրքմենիստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աթա Սերդարովին: Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով եւ հաջողություններ մաղթեց նրա առաքելությանը: Նորին Սրբությունը նաեւ գոհունակություն հայտնեց դեսպանատան կողմից Հայ Առաքելական Եկեղեցու եւ Հայոց Հայրապետի հանդեպ մշտապես ցուցաբերվող հարգանքի եւ ուշադրության համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Թուրքմենիստանի հայ համայնքին, հայ եւ թուրքմեն ժողովուրդների պատմական կապերին: Շնորհակալություն հայտնելով ընդունելության առիթով՝ պրն. Սերդարովը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ իր պաշտոնավարման շրջանում կանի ամենը՝ երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացման ու զորացման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց ապակենտրոնացված համագործակցության հայ-ֆրանսիական համաժողովի մասնակիցներին:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայ-ֆրանսիական կապերի շարունակական զարգացման համար, որի շարժիչը երկու ժողովուրդների բարեկամության ոգին է: Վեհափառ Հայրապետը մեծապես կարեւորեց Հայաստանի եւ Ֆրանսիայի քույր քաղաքների միջեւ համագործակցությունը, որ պտղաբերում է նորանոր իրագործումներով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում նաեւ երախտագիտություն հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին եւ իշխանություններին՝ հայ ժողովրդին ցուցաբերած զորակցության համար, մասնավորապես, Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում, ինչը կարեւոր է թե՛ հայ ժողովրդի նկատմամբ արդարության հաստատման եւ թե՛ հետագա նման ողբերգությունների կանխարգելման համար:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու գործունեությանը եւ ներգրավվածությանը միջկրոնական երկխոսության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ